ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-24/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք.Երևան 28.02.2024թ

ժամը 13:20

Նիստին մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Զաքյան

անդամներ՝ Հ. Հովսեփյան

Վ. Դավթյան,

Լ. Վասիլյան

քարտուղար՝ Ա. Ապերյան

Հայտերի բացման մասին

(Ա. Զաքյան)

«ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-24/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հայտերի բացման նիստը տեղի ունեցավ ք. Երևան, Թաիրովի 15, 311 սենյակ հասցեում, 2024 թվականի փետրարի 7-ին ժամը 13:20-ին:

1. Տվյալներ հայտ ներկայացրած մասնակիցների վերաբերյալ

«ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-24/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

h/h	Մասնակիցների անվանումը	Հասցեն, հեռախոսամարը
1	«ՍՏՐՈՅՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	Ք. Երևան, Խաչատրյան փող., 22շ. 25 բն. (+37477) 77 89 63
2	«ԳԵՊՈՏԱՆԻՔ» ՍՊԸ	Ք. Երևան. Խաղաղ Դոնի 1 նրբ. 7 (+37491) 40 71 04
3	«ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Սարուխան, Հ. Աբրահամյան 1 (+37493) 90 89 90

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

2. Տվյալներ՝ ծրարի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

Հայտը պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

3. Տվյալներ՝ բացված ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարում առկա էին հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

4. Տվյալներ՝ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

---

1. ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-24/04 ծածկագրով մրցութային ընթացակարգի հայտերի բացմանը մասնակցել են հետևյալ մասնակիցները՝ «ՍՏՐՈՅՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն, «ԳԵՊՈՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն և «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ն: Ներկայացված հայտերում առկա փաստաթղթերում արձանագրվել է հրավերի պահանջներին անհամապատասխանություն: Մրցութային ընթացակարգի նախագծանախահաշվային փաստաթղթերով հաստատված և հրավերով պահանջված սարք-սարքավորումների երաշխիքային ժամկետի վերաբերյալ հրավերի հավելված թիվ 1.1-ում առկա են հետևյալ անհամապատասխանությունները՝

1.1 «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ն հրավերի թիվ 1.1 հավելվածը չի լրացրել:

1.2 «ԳԵՊՈՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն լրացրել է բայց ոչ համապատասխան հրավերին՝ պահանջված 3 տարվա փոխարեն տալով 1 տարվա երաշխիք սարքեր-սարքավորումներին, միևնույն ժամանակ չի ներկայացրել «1—2 էլեկտրամատակարարում» բաժնի 4-րդ, 5-րդ և 6-րդ տողերի համար, «1—6 Անվտանգության համակարգերի» բաժնի 1-ից սկսած մինչև 5-րդ և 7-ից սկսած մինչև 9-րդ տողերը ներառյալ:

1.3 «ՍՏՐՈՅՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն հավելված 1.1-ում չի լրացրել չափաբաժնի հերթական համարները, որոնք անհրաժեշտ էր լրացնել ըստ ներկայացված չափաբաժնի, վերջից երկու տողերը լրացվել է համապատասխան հրավերի պահանջների 3 տարվա երաշխիքային ժամկետ, իսկ մնացած տողերը չեն համապատասխանում հրավերով երաշխիքային ժամկետի պահանջներին: Սույն հավելվածում «ֆիրմային անվանում» սյունակում 3-րդ, 4-րդ և 5-րդ տողերում լրացված են ապրանքային

տեսակներ որոնց համար չկար ներկայացված որևէ պահանջ սարք-սարքավորման ֆիրմային անվանման և/կամ երաշխիքային ժամկետի, որը անհրաժեշտ է հանել: Ֆիրմային անվանում և/կամ երաշխիքային ժամկետ պահանջող տողերից բացակայում է հետևյալը՝ «1—2 էլեկտրամատակարարում» բաժնի 4-րդ տողը, N «1—4 Ջեռուցման» բաժնի՝ 2-րդ տողը, N «1—5 Օդափոխության բաժնի»՝ 2-րդ տողը և N «1—6 Անվտանգության համակարգեր» բաժնի՝ 1-ից սկսված միչև 9-րդ տողերը: «ՍՏՐՈՅՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի «1—1 Շինարարական աշխատանքների» բաժնի «մետաղական կոնստրուկցիաների իրականացում» ենթաբաժնի 43-րդ տողում ծավալի և միավոր արժեքի հանրագումարը չի համապատասխանում լրացված արժեքի հետ, հարկավոր է միավորի արժեքը նվազեցնել համապատասխանեցնելով ընդհանուր գնի հետ:

2. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետը գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել մեկ աշխատանքային օրով մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման նպատակով:
3. Կասեցման արդյունքում մասնակիցները ներկայացրել են արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

5. Մասնակցի առաջարկած գինը

Մասնակցի առաջարկած գինը հետևյալն է՝

ՀՀ դրամ

N	Չափաբաժնի անվանում	Նախահաշվային գինը թվերով (տառերով)/ ՀՀ դրամ/	Մասնակցի անվանումը	Առաջարկվող գինը /ՀՀ դրամ/առանց ԱԱՀ	ԱԱՀ /ՀՀ դրամ/	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ
1	Ընհանուր շինարարական աշխատանք	63 175 470 /վաթսուներեք միլիոն մեկ հարյուր յոթանասունհինգ հազար չորս հարյուր յոթանասուն/	«ՍՏՐՈՅՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	44 575 158	8 915 032	53 490 190
			«ԳԵՊՈՏԱՆԻՔ» ՍՊԸ	49 961 266,666	9 992 253,334	59 953 520
			«ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ	46 623 300	9 324 660	55 947 960
2	Ընհանուր շինարարական աշխատանք	63 175 470 /վաթսուներեք միլիոն մեկ հարյուր	«ՍՏՐՈՅՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	46 968 042	9 393 608	56 361 650

		յոթանասունհինգ հազար չորս հարյուր յոթանասուն/	«ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ	46 623 300	9 324 660	55 947 960
3	Ընհանուր շինարարական աշխատանք	63 175 470 /վաթսուներեք միլիոն մեկ հարյուր յոթանասունհինգ հազար չորս հարյուր յոթանասուն/	«ՍՏՐՈՅՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	45 754 817	9 150 963	54 905 780
			«ԳԵՊՈՏԱՆԻՔ» ՍՊԸ	49 961 266,666	9 992 253,334	59 953 520
			«ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ	46 623 300	9 324 660	55 947 960

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

6. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել: Հայտերի վերաբերյալ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 25-րդ ենթակետին համապատասխան հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

7. Տվյալներ՝ ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը՝

1. «ՍՏՐՈՅՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի և «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերում անհամապատասխանություններ չհայտնաբերեց:
2. «ՍՏՐՈՅՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն և «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ն ներառված չեն՝
   - հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
   - հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կամակերպման կարգ»-ի 40-րդ կետի 6-րդ ենթակետը՝ 1-ին և 3-րդ չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած (ընտրված) մասնակից ճանաչել՝ «ՍՏՐՈՅՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին իսկ 2-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած (ընտրված) մասնակից ճանաչել՝ «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

8. Արդյունքների ամփոփման մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովը որոշեց ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, որը սահմանում է անգործություն 10 օրացույցային օրով և 36-րդ հոդվածի 2-ին մասով ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և կնքել պայմանագիր անգործությունը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Զաքյան

Անդամներ՝ _____ Հ. Հովսեփյան

_____ Լ. Վասիլյան

_____ Վ. Դավթյան

Քարտուղար՝ _____ Ա. Ապերյան